

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՐՅԱ ՊԱՅԱՌՈՒՄ
ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ*

Միեր Հարությունյան

Ամեն մի կայացած բարձրագույն ուսումնական հաստատության առաջնահերթ գործառույթներից են ինչպես ժողովրդական տնտեսության, կրթության, գիտության ու մշակույթի և պետության կյանքում կարևոր նշանակություն ունեցող այլ ոլորտների համար մասնագետներ պատրաստելը, այնպես էլ ազգային գաղափարախոսության ծևավորամանը, հասարակական գիտակցության ածին, իսկ հարկ եղած դեպքում նաև հայրենի պետության պաշտպանության գործին ըստ ամենայնի նպաստելը և, մեր պարագայում հանուն ժողովրդի ազատության ու անկախության մղվող պայքարին անմնացորդ մասնակցելը: Այս տեսակետից, Արցախի մայր բուհը գտնվեց իր կոչման բարձրության վրա և հիշարժան ծերնարկումներով հարստացրեց ազատագրական պայքարի տարեգործության էջերը:

Ազգային ազատագրական պայքարի նորորյա փուլին Արցախի մայր բուհի մասնակցության, դասախոսական և ուսանողական անձնակազմերի հայրենանվեր գործունեության մասին վերջին տարիներին լույս են տեսել որոշակի հրապարակումներ, որոնք այսօր ստացել են սկզբնաղբյուրային նշանակություն՝ թեմայի համապարփակ ուսումնասիրության համար: ԱրՊՀ պաշտոնաթերթում Շարժման 10-ամյակի առթիվ տպագրվել են մի շարք նյութեր, որոնցից կարելի է առանձնացնել Ս. Խանյանի [1], Լ. Գրիգորյանի [2] հրապարակումները: Պատմության ամբողոնի դասախոս Ռ. Բալյայանի հրապարակման մեջ ներկայացված են ուսանողների մասնակցության առանձին դրվագները [3]: Թեմայի ուսումնասիրությունն իր շարունակությունն է գտնել դեպքերի մասնակից-պատմաբանի այլ հրապարակումներում [4]: Ուշագրավ տեղեկություններ կան Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի նախկին ռեկտոր Սերգեյ Մարգարյանի հոդվածում [5]:

Մայր բուհի անձնակազմի մասնակցության հետաքրքիր մանրամասներ կարելի է գտնել < Աբրահամյանի գրքում [6], որը, մասամբ, սկզբնաղբյուրային նշանակություն ունի խնդրո առարկա թեմայի գիտական ուսումնասիրության համար:

ԱրՊՀ ուսանողների միջանքը բացահայտելու և նրանց հիշատակը հավերժացնելու կոչված առաջին ամբողջական ժողովածուի [7] հրատարակումը նաև հետապնդելի է երկրորդ վերամշակված հրատարակությունը նախապատրաստելու համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու նպատակ: Դրան հաջորդել են երկու կողեկտիվ մենագրություններ, որոնցում խնդրո առարկա թեման հետագա լրամշակման ու որոշակի մակարդակի է հասցել [8]:

Շարժմանն ուսանողության մասնակցության վերաբերյալ նյութեր կան նաև պարբերական մամուլում [9]:

Ուսանողության մասնակցությունը Արցախյան պատերազմին առանձին ակնարկային հոդվածի նյութ է դարձել ազատագրական պայքարին նվիրված համրագիտարանում [10]:

*Հոդվածն ընդունվել է 05.12.2014:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՍՍՀ պատմության ամբողոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ծնորհակալ աշխատանք է կատարել Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի առաջին ռեկտոր Արցասու Ազանեսյանը [11], ով Արցախում համալսարանի ստեղծումը համարում է ազատագրական պայքարի նվաճումներից և ՀՀ բարձրագույն կրթության համակարգի մեջ Արցախի համապատասխան ոլորտի ներառման կարևոր քայլերից մեկը:

Տողերին հեղինակը թեմայի առանձին հիմնահարցերի անդրադարձել է նաև առանձին հոդվածներով ու գեկուցումներով[12]:

Խնդրո առարկա թեմայի վերաբերյալ հրապարակումներ կան նաև Արցախյան ազատագրական պայքարին և, մասնավորապես, նահատակներին նվիրված գրքերում ու ժողովածուներում հղումներով:

Աղրբեջանական ԽՍՀ-ի կողմից Լեռնային Ղարաբաղում վարվող խորական քաղաքականության պատճառով այնպես է ստացվել, որ Արցախում բարձրագույն ուսումնական հաստատություն բացելը հենց սկզբից քաղաքականացվել է: Աղրբեջանցի բռնադատիչներն անգամ դա էին ուզում ծառայեցնել Լեռնային Ղարաբաղի ժողովրարական-ազգագրական կազմը հօգուտ աղրբեջանցիների փոխելու տասնամյակներ տևած քաղաքականությամբ: Այդ մասին ահա քա ինչ է վկայում ժամանակակիցը. «1969 թ. Հ. Ալիկի ծրագրով որոշվեց Բարվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը փակել, տեղափոխել Ստեփիանակերտ, բացել մասնաճյուղ՝ երեք բաժիններով. հայկական, աղրբեջանական, ռուսական: Փաստորեն նշանակում էր հայակերտ Բարվից օտարել հայոց լեզուն, Ղարաբաղում հիմքեր ստեղծել աղրբեջաններներ մասսայականացման եւ ազերի մտավորականության խիտ բանակ ունենալու համար [13]»: Այսպիսով՝ 1932 թվականից Բարվում գործող ԱՊՄԻ հայկական բաժինը 1969 թ. տեղափոխվեց Ստեփիանակերտ: 1973 թ. մասնաճյուղի առաջին՝ 132 շրջանավարտների թողարկման տարրում այն ծեռք բերեց առանձին բուհի՝ Ստեփիանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի կարգավիճակ [14]:

Խորհրդային Աղրբեջանի բռնատիրության պայմաններում ստեփիանակերտյան բուհում կրթություն էր ստանում հիմնականում մեր մարզի երիտասարդության սերուցքը: Ուժեղ վերահսկողության պայմաններում այդ տարիներին մարզի մտավորականության դարբնոցում ամթեղված մնում էին ազատագրական պայքարի կայծերը, որոնք բռնկվեցին ԽՍՀՄ-ում վերակառուցման ուղղությունից որդեգրումից ի վեր: Հասարակության մեջ տեղի ունեցող խմորումներն իրենց զգայուն արտահայտություններն ու դրսեւրումները գտան Ստեփիանակերտի բուհում: Ազատագրական պայքարի զաղականությունը տարվեցին ուսանողները, որոնք զաղտնաբար իրենց ջանքերն էին գործադրում զաղակարաբրողական ու կազմակերպական աշխատանքների ուղղությամբ:

Իրականությունն են արտացոլում հետևյալ տողերը, որոնք վերաբերում են նաև Ստեփիանակերտի մանկավարժական ինստիտուտին. «Խորհրդային վարչակարգի պայմաններում Արցախի դպրոցը կարողանում էր ոչ միայն աշակերտներին տալ անհրաժեշտ գիտելիքներ ու որակյալ կրթություն, այլև նրանց դաստիարակում էր զերմ հայրենասիրության և իր ժողովրդի նկատմամբ անսահման նվիրվածության ազգային վեհ զաղակարներով: Եվ հենց այդ սերունդ էր, որ ուսերին վերցրեց Արցախյան ազատագրական պայքարի ու հայկական հայրենական պատերազմի ամբողջ բեռը, զենքը ծեռքին դիմակայեց Աղրբեջանի ռազմական ազրեսիային և ուժերի՝ ոչ իր օգտին, հարաբերակցության պայմաններում հաղթեց գոյապայքարում, խաղաղութ-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

յուն թերեց արցախահայությանը և պատերազմի բովում կերտեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը» [15]:

Դեռևս 1986 թ. ապրիլից ընդհատակում գործող «Արցախական միության» աշխատանքներին մասնակցում էին ուսանողներ, որոնք պայքարի փորձ ծեռք թերեցին ու ազատագրական պայքերի կրողներ դարձան՝ հետագայում ստանձնելով ուսանողության կազմակերպման, գաղափարական կողմնորոշման և իրենց հետևից տանելու առաքելությունը:

Դասախոսական կազմին շարժմանը ներգրավելու համար հարկ եղավ որոշակի աշխատանք տանել: Լ. Գրիգորյանի վկայությամբ՝ երբ իր գործընկերներին ևս պայքարի մեջ ընդգրկելու հանձնարարություն ստացավ, արդեն բուհում երկար ժամանակ տարակուսում էր՝ ո՞ւմ մոտենալ: Իսկ թե ինչու, պարզաբանում է Լ. Գրիգորյանը. «Հիմա, երբ ամեն ինչ վաղուց հետևում է մնացել, շատ ոյուրին կարող է թվական ամենը, սակայն, այս ժամանակ միանգամայն այլ էր մթնոլորտը: Աշխատում էինք աղբեջանական բաժնի հետ՝ կողք կողքի, և մեր որոշ դասախոսների մեջ շատ պինդ էր նաև աշխատանքը կորցնելու և աշալությ հարևանների մատնությամբ ՊԱԿ-ի հետապնդումներին ենթակվելու վտանգը. - Մ. Հ.): Նախընտրեցի դիմել առավել վստահություն ներշնչող գործընկերներին: Զգուշորեն բացատրեցի, թե ինչն ինչու է: Ես ի զարմանն ինձ, ոմանք կտրականապես հրաժարվեցին, ոմանք քաղաքավարությամբ մերժեցին, մտերմարար խորհուրդ տալով, որ հետու մնամ նման բաներից, որի(որոնց) վերջը բանտախուցն է: ... Համեմ Գրիգորյանն ու Համեմ Սովորյանը ոչ միայն սիրահոժար ստորագրեցին իրենց պարզած թուղթը, այլև, հավանորեն ինձ ավելի գոտեպնդելու համար, նոյնիսկ կատակեցին.«Որ դու կին տեղովդ այդ վտանգավոր գործը քեզ վրա ես վերցրել, մենք մեր տղամարդ տեղներովս ինչու՝ պիտի վախենանք ստորագրելուց» [16]:

1988թ. փետրվարին, երբ արցախահայությունը սուքի ելավ մայր Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնին հակադրվեց աղբեջանականը: Ս. Խանյանի վկայությամբ՝ աղբեջանցի դասախոսները համախմբվեցին ինստիտուտի ուսումնական և գիտական աշխատանքների գծով պրոբեկտոր Ն. Կովիլի շուրջը: Նա ստեղծել էր «Գորշ գայլեր»-ի խումբ: Նրանք բացեիրաց դիմում էին հայ դասախոսներին. «Եթե չեք ցանկանում մնալ Աղբեջանի կազմում, կարող եք թողնել Ղարաբաղը և հեռանալ»: Աղբեջանցի դասախոսները մեկնում էին Աղդամ, Ֆիզուլի, Ջարրայիլ, Կուբաթյու, Լաշին, Եվլախ, Բարդա, Սիրբաշիր, Քյալքաջար և թուրք բնակչությանը հրահրում հայերի դեմ, կոչ անում գինվելու [17]:

Բնականարար, պայքարի ելած հարազատ ժողովրդի գաղափարական ուղղորդումից անմասն չէր մնում նաև Ստեփանակերտի բուհի դասախոսական կազմը, հատկապես՝ նրա քաղաքականապես առավել ակտիվ մասը: Բավական է հիշել, որ 1988 թ. փետրվարի 13-ի առաջին հանրահավաքը, որն առանց ուսանողության ակտիվ մասնակցության դժվար է պատերազմել, բացել է մանկավարժական ինստիտուտի դասախոս Գրիգորի Աֆանասյանը: Իսկ երբ ԼՂԻՄ մարզպարհորդի արտահերթ նատաշրջանը փետրվարի 20-ին ընդունեց պատմական որոշումը, որը դարձավ ընդհատակից Շարժման դուրս գալու և համաժողովրդական պայքարի ծավալման աղդակը, «մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական ողջ կազմը դարձավ մեր ժողովրդի գաղափարաքաղաքական խոսափողը» [18]:

1988-ի փետրվարի 27-29-ին Սումգայիթում հայերի ցեղասպանությունը ցնցեց համայն հայությանը, այդ թվում և մեր բուհի հայկական բաժնի դասախոսներին և ու-

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

սանողմերին: Լարված իրավիճակում ադրբեջանցի դասախոսների և ուսանողների անբարտավան պահվածքը, պատժողի և հաղթողի ցուցադրական կեցվածքը խորացնում էին թշնամանքը: Այլևս հնարավոր չէր շարունակել երկու բաժմների համատեղ աշխատանքը: Կոմկուսի մարզային կոմիտեի կամակատար ղեկավարների և ՊԱԿ-ի աշխատակիցների՝ ժողովուրդների «կենինյան բարեկամության» մասին չղադարող հիշեցումները ծաղոր էին թվում: Իրենց այցելություններով հայ դասախոսներին ծանծրացնում էին հատկապես ՊԱԿ-ի ղեկավար և հասուկ աշխատակիցները: Պարերեսորեն հաճախելով ինստիտուտ՝ նրանք կաղապարված խրատներ էին կարուս դակիճում հավաքված դասախոսական կազմի գլխին և միակողմանիորեն հայերին մեղադրում «դաշնակցական ազգայնամոլական գաղափարախոսությանը վարակվելու, ազգամիջյան թշնամանը սերմանելու» մեջ: Միաժամանակ հանգիստ չէին տալիս Ադրբեջանի կառավարող շրջանները՝ իրենց տարաբնույթ հրահանգներով ու կարգադրություններով էլ ավելի խորացնելով հակասությունները: Այս ամենը կոչվում էր գաղափարական մշակում: Ադրբեջանի խորհրդային ու կուսակցական պաշտոնյաներին թվում էր, թե իրենց զավակություններով կիաջողեին տարհամոգել ազատագրական պայքարի դրոշ պարզած ժողովուրդի մտավոր ու կազմակերպական ունակություններն ի սպաս դրեց ադրբեջանական բռնատիրությունից ազատագրվելու պայքարին:

Տարերի մեջ էր ուսանողությունը: Այն աստիճանաբար դարձնում էր պայքարի շարժիք ուժերից մեզը: Ուսանողության գործողությունները համակարգելու և ջանքերը համախմբելու նպատակով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում ստեղծվեցին ընդհատակայա կազմակերպություններ և միություններ, որոնք գաղափարարդության եռանդրուն աշխատանք էին ծավալել: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մի շարք ներկայացուցիչներ աջակցում և խրախուսում էին քաղաքականական ակտիվ երիտասարդներին: ԽՍՀՄ տարբեր վայրերից, հատկապես Մուկույից, Լենինգրադից թղթակիցներ էին գործուղվում Արցախ, ովքեր, նախնական զաղափարական մշակման ենթարկվելով Բաքվում, հիմնականում միակողմանիորեն, խորհրդային Միության կայսերապետական շահերի ու ադրբեջանական նենգափոխումների շրջանակներում էին ներկայացնում Արցախում տեղի ունեցող հրադարձությունները: Նրանք Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում նախ հանդիպում էին տիրահոչակ պրոռեկտոր Ն. Կովիկի, կուսակցությունի քարտուղար Բ. Ֆարազովի և ադրբեջանցի մուս դասախոսների հետ: Ապա նրանց շուրջերից առնելով «ակադեմիկու» Զ. Բունյառովի և նրա սաների մոգնած կեղծիքները՝ ադրբեջանական քարոզակերենայի արտաքրությանը զանադրաբար հասցնում էին խորհրդային Միության բազմամիլիոն ընթերցողներին՝ ձևավորելով հասարակական խեղաթյուրված կարծիք Արցախի և նրա ազգաբնակչության ազատագրական պայքարի մասին:

Ճշմարտությունը հանրության լայն խավերին ու ԽՍՀՄ ղեկավարներին հասցնելու համար հորդաց դասախոսների հեռագրերի ու նամակների հոսքը Մոսկվա, այնուհետև հրապարակվեցին նորանց թղթակցություններն ու հոդվածները «Խորհրդային Ղարաբաղ» և այլ պարբերականներում: Ժամանակին օրագրային գրառումներ կատարած դասախոս Լ. Գրիգորյանի վկայությամբ Սեդա Ղազանչյանն այն «եզակի դասախոսներից էր, որ իր ողջ աշխատավարձը օգտագործում էր՝ հեռագրեր հղելով Գորբաչովին»[19]: Կարելի է նշել < Գրիգորյանի, Ա. Մխիթարյանի և Լ. Գրիգորյանի հրապարակումը մարզային թերթի 1988 թ. մարտի 18-ի համարում, Ս. Ղաղայանի և

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2015

Ա. Խանյանի բողոք-նամակը ադրբեջանցի վայ-գիտնականներից մեկի գոքի հանիրավի կարևորման դեմ և այլն:

Ուսանողներին և դասախոսներին ավելի ու ավելի հաճախ կարելի էր տեսնել հանրահավաքներում ու ցույցերում: Բուհից առաջին հեռագիրը Գորբաշովին, ըստ Լ. Գրիգորյանի, ուղարկվել էր 200 ուսանողների ստորագրությամբ [20]: Դասախոսներ Հ. Գրիգորյանի, Գ. Աֆանասյանի, Ա. Միհրարյանի, Հ. Մովսիսյանի, Ս. Դադյանի, Կ. Արամյանի, Ռ. Բալայանի, Ծ. Արդահամյանի, Ս. Ղազանչյանի, Լ. Գրիգորյանի, Ս. Խանյանի և ուրիշների բովանդակվից ելույթներում հիմնավորվում էին արցախահայության պայքարի արդարացնելուն ու անշրջելիությունը:

Հայ դասախոսները, ովքեր հստակ պատկերացնում էին իրենց անելիքները, ըստ ժամանակակցի, ծրագրել էին.

1. Կազմակերպել ուսանողության մասնակցությունը շքերթներին և հանրահավաքներին.

2. Կապեր ստեղծել Աստեկանակերտի մանկավարժական ինստիտուտի և Հայաստանի բուհերի ուսանողության միջև՝ զարդարական պայքարին ակտիվորեն մասնակցելու նպատակով.

3. հանդես գալ հանրահավաքներում, Ստեկանակերտ ժամանած քաղաքական և հասարակական գործիքների առջև՝ շարժման պատճառների և նպատակների վերաբերյալ.

4. գրավոր պատասխանել ադրբեջանցի վայ-պատմաբանների և գրողների ստահող ելույթներին՝ Արցախը ադրբեջանական-ալբանական տարածք հայտարարելու, հայկական նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները սեփականելու դեմ.

5. հեռագրեր և նամակներ հղել ԽՄԿԿ Կենտկոմ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, ԽՍՀՄ նախարարների խորհուրդ և այլ ասյաններ.

6. պատրաստել պայքարի բովանդակությանը վերաբերող կարգախոսներ, լոգունգներ, տողացույցներ: (Այդ աշխատանքը կատարում էր նկարիչ Լ. Ղալայանը).

7. անհրաժեշտության դեպքում կազմակերպել դասադուներ, նստացույցեր, հացադրություններ.

8. պատրաստ լինել դիմակայելու թշնամու ուսնաձգություններին եւ հարձակումներին.

9. մասնակցել ժողովրդական բանագնացությանը Մոսկվա [21]:

Պատահական չէ, որ 1988-ի մայիսի 2-ին Արցախից Մոսկվա մեկնած բանագնացների կազմում ընդգրկված էին մեր բուհի դասախոսներ Հ. Գրիգորյանը, Ա. Միհրարյանը և Լ. Ղալայանը:

Ադրբեջանի դեկավար շրջանները ծգուում էին ամրապնդելու ադրբեջանցիների դիրքերը Ստեկանակերտի մանկավարժական ինստիտուտում և պարապունքները համատեղ շարունակելու անվան տակ 1988-ի ապրիլ ամսվա սկզբին Շուշից, Աղդամից և այլ շրջեններուներից հաստուկ ավտորուսներով Ստեկանակերտ տեղափոխեցին ադրբեջանական բաժնի ուսանողներին: Դրանով Բաքուն հոյս ուներ հակակշիր ստեղծել հայ ուսանողությանը և խոչնդուտել նրա ակտիվության դրսնորումները:

Սակայն մայիսի սկզբներին իրավիճակը մարզում վերստին սրվեց: Շուշի քաղաքից հայ բնակչությունը, մահվան սպառնալիքի տակ, բռնատեղահանվեց իր ծննդավայրից: Ստեկանակերտում անարդար վերաբերմունքից ու հարևանների կամայականություններից վրդոված ցուցարարները պատասխան քայլերի դիմեցին: 150-ից

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ավելի ստեփանակերտցի երիտասարդներ մտան ինստիտուտ, միացան իայ ուսանողներին և անվտանգության նկատառումներով առաջարկեցին աղրբեջանցի ուսանողներին խաղաղությամբ ազատել բուհը: Դա թերևս միակ ուղին էր աղրբեջանցիների նոր սադրանքներից խուսափելու համար: Հայ երիտասարդները հանդես բերեցին զապվածություն ու վճռականություն, որից քար էին կտրել անզամ ՊԱԿ-ի աշխատակիցները: Աղրբեջանական ԽՍՀ իշխանությունները, մուսկովյան հովանավորների հետ միասին նման առիթներ էին որոնում Ստեփանակերտի բուհը փակելու համար, ինչը նրանց հաշվարկներով, կրուլացներ Արցախյան շարժման զաղակարական ներուժը: Ընդ որում, իհարկե, ոչ պատահականորեն, աղրբեջանական բաժինը մնաց փոթորկվող Արցախում՝ տեղափոխվելով Շուշի, իսկ հայկական բաժինը հեռացվեց Շարժման կիզակետից, 1988-ի նոյեմբերի սկզբին տեղափոխվելով Վանաձոր (Կիրովական):

Դեպքերի ընթացքը ցույց էր տալիս գինված ինքնապաշտպանության անխուսափելիությունը, որովհետև Աղրբեջանական ԽՍՀ ղեկավարների ռազմատեխնի հայտարարությունները, իայ բնակչության բնատեղահանությունները և անմեղ մարդկանց արյունահեղությունը, դաժան շրջակակիումը արդեն իսկ պատերազմի ազդանշաներ էին: Ուսանողությունն ընդհատակում քայլեր էր ծեռնարկում գինված կամավորական ջոկատ ստեղծելու ուղղությամբ, որոնք ուղիղ համեմատական էին դեպքերի աստիճանական զարգացմանը և, իհարկե, գինված ինքնապաշտպանության անհրաժեշտության ու անխուսափելիության մեջ մարդկանց (մինչև իսկ ուսանողության լայն շրջաններին) համոզելու հաջողությամբ: Ուսանող ակտիվիստ Ալիկ Սարգսյանի վկայությամբ՝ 1988 թ. աշնանը ուսանողական միջավայրում արդեն ձևավորվել էր մի քանի հոգուց բաղկացած մարտական միջուկ, ովքեր, անհրաժեշտության դեպքում, պատրաստ էին գենք վերցնելու, սակայն դեռևս լուծված չէր գենքի ու գինամթերքի հարցը: Այդ ջոկատը վերջնական ու կայուն կերպով կազմավորվեց, երբ ուսանողությունը տեղափոխվեց Վանաձոր, ուր բարենապատ պայմաններ կային կազմակերպչական աշխատանքներ տանելու համար: Ապագա ջոկատի կորիզը կազմող 6-7 երիտասարդները հասցրին ծանոթանալ Շարժման տեղական ակտիվիստների հետ իսկ երեկոներին Պոլիտեխնիկի մարզադաշտում զաղտնի արևելյան մարզածեր պարապել, այսինքն՝ արդեն պատրաստվում էին առաջիկա մարտական առաջադրություններին [22]:

Սպիտակի 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից կիսախարխով դարձավ Կիրովականի մանկավարժական ինստիտուտի շենքը: Այլևս նախկին ՍՍՀ-ի կողեկտիվի մնալի այնտեղ անհնարին էր: Դասախոսների և ուսանողների մեժամասնությունը դեկտեմբերի 8-ին վերադարձավ Ստեփանակերտ: Շարժման ակտիվիստ ուսանողները կամավոր մեկնեցին աղետի գոտի և օգնության ծերք մեկնեցին աղետյալ հայրենակիցներին:

ԼՂԻՄ կառավարման հատուկ կոմիտեի դեկավար Ա. Վոլսկին ստեղծված կացությունից ելքը համարեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի վերափոխելը: Այդ քայլը պետք է դիտարկել Արցախի արտադրական ծեռնարկությունները և մշակութային հիմնարկները Աղրբեջանական ԽՍՀ ենթակայությունից հանելու և Հայկական ԽՍՀ ենթակայությանը հանձնելու այն ուղղույթի համատեքստում, որը փորձում էր իրականացնել ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեն:

Աղետալի երկրաշարժի, շրջակակման, աղրբեջանցիների չղադարող ահաբեկչությունների և լարված քաղաքական իրադրության պայմաններում ԿՄԻ Ստեփանա-

ՄԵՐՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Կերտի բաժանմունքը շարունակում էր մասնագետների ամենամյա թողարկումը: Այս պես՝ 1987-1988 ուս. տարրում թողարկվել է 266 մասնագետ, 1988-1989-ին՝ 229, 1989-1990-ին՝ 260, 1990-1991-ին՝ 239, 1991-1992-ին՝ 146 [23]:

1989 թ. գարնանը ծերնարկվեցին ուսանողությանը կազմակերպելու և ջանքերը համախմբելու քայլեր: Դրա համար անհրաժեշտ էին միավորող գաղափար և ծրագրված ու նպատակադրույթական գործելակերպ, որը կանոնակարգված պիտի լիներ կանոնադրությամբ: Այդ խնդիրը լուծելու համար հիմնադրվեց Հայոց ընկերավարական արցախական կուսակցությունը (ՀԸԱԿ), որը առաջարիթել էր ռազմաքաղաքական խնդիրները: Ակտիվիստ ուսանողները 1988-ի մարտ ամսում երդվեցին ԱԾԿ-ի Ծրագրի, Կանոնադրության, գենքի և եռագույն դրոշի վրա: Դա, փաստորեն, դարձավ նրանց գինվորական ու կուսակցական երդումը:

Կուսակցության շարքերն ընդլայնելու նպատակով գաղափարական աշխատանք ծավալվեց ուսանողության շրջանում: Ուսանող-ակտիվիստները գործում էին շատ զգույշ՝ ՊԱԿ-ի լրտեսներից զաղտսինի մնալու և պատահական մարդկանցից զերծ մնալու նպատակով: Իսկ ընտրությունն կատարվում էր խիստ չափանիշներով: Սի քանի ամիս ամց արդեն ԿՄԻ Ստեփանակերտի բաժանմունքում զգալի էր ընդհատակյա կազմակերպության աշխատանքը: ԱԾԿ-ի հետքերը թարցնելու նպատակով դրոշում է ստեղծել երիտասարդական կազմակերպություն, որը կոչված էր նոր անդամներով համարելու կուսակցությունը և փոխարինելու արդեն իսկ հեղինակագրկամբ կոմերիտմիությանը: Այդպես ստեղծվում է Արցախյան ուսանողաերիտասարդական միությունը (ԱՈՒԵՍ): Ակտիվիստ Ալիկ Սարգսյանի վկայությամբ՝ մինչև 1989 թ. աշունը ծնավորվել էր նաև ուսանողական «ջոկատը», որը դեռ գործումնեություն չէր սկսել [24]:

Ուսանողական ջոկատի գործունեության սկիզբ կարելի է համարել 1989 թ. աշունը, երբ կապ հաստատելով Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի (ԲԻԽ) հետ, 10-15 մարդուց կազմված առանձին խմբերով, շինօնկատի պատրվակի տակ, ուսանողները 10-20 օրով մեկնում էին Բերդածոր ու զինված հերթապահություն տանում ենթաշրջանի 4 գյուղերում: Այն ժամանակ մշտական հրամանատար չկար, այն ընտրվում էր առաջադրանքը կատարելուց առաջ, հենց առաջադրանքը կատարելու վայրում: Ընդհանուր հրամանատարը Արկադի Կարապետյանն էր, որի հետ համաձայնեցվում էր ամեն մի գործողություն, իսկ որոշում կայացնելիս հաշվի էր առնվում բոլոր մասնակիցների կարծիքը:

Գաղափարաքաղաքական գործունեությունից զատ՝ ուսանողները գրաղվում էին նաև պարտիզանական գործողություններով, ավելի հաճախ՝ գենքի ու զինամթերքի հայթայթում և տեղափոխում, դիվերսիոն գործողություններ սահմանամերձ բնակավայրերում, ուր նաև շփումների մեջ էին մտնում տեղի բնակչների հետ՝ վստահելի մարդիկ գտնելու նպատակով:

Երբ 1990 թ. գարնան վերջին ռազմաքաղաքական գործունեություն վարող ուսանողները ավարտում էին բուհը, որոշեցին մի հաստատակամ, վստահելի մարդ թողնել տեղում հանձին Ֆելիքս Գարրիեյանի, ով պիտի շարունակեր աշխատանքներն ուսանողների հետ, իսկ իրենք՝ գնալ Արցախի շրջանները՝ տեղերում գործելու և ընդհատակյա կամավորական ջոկատներ ստեղծելու նպատակով: Ալիկ Սարգսյանն ու Արմեն Բարայանը բուհ ավարտել էին, իսկ Միեր Բեգլարյանն ու Նորայր Դանիելյանը տեղափոխվեցին անհատական ուսուցման կարգի, որպեսզի միասին մեկնեին Մարտակերտի շրջան, որը, նրանց իսկ գնահատմամբ՝ Արցախյան շարժման թույլ օդակն էր, թեև մարզի ամենամեծ վարչատարածքային միավորն էր [25]: Ա. Բարայա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Ար և Ն. Դանիելյանը գործում էին ներքին (հարթավայրային) գյուղերի, իսկ Ա. Սարգսյանն ու Ս. Բեզգայրյանը վերին(լեռնային) գյուղերի ենթաշրջաններում: Միաժամանակ շրջիկ ջոկատով նրանք մարտական առաջադրանքներ էին կատարում Արցախի մյուս շրջաններում՝ հակառակորդին անպատճի չքողնելու և ծայրամասային գյուղերի բնակչներին հակառակորդի հարձակումներից պաշտպանելու նպատակով: 1990 թ. հոկտեմբերին ուսանողների ջոկատի մարտիկների մի մասը ծերբակալվեց Մարտակերտի շրջանի Քաջավան գյուղում:

1990թ. օգոստոսի 11-ին ՀՀԿ-ի աջ թևի հիմքի վրա Հ. Խաչատրյանի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայ ազգայինականության ճակատ(ՀԱՃ) ռազմաքաղաքական կազմակերպությունը, որի գաղափարախոսության հիմքը Գարեգին Նժենի «Յեղակուն» ուսմունքի հիմնադրույթներն են: Կազմակերպության մեջ ընդգրկվել են մեծ թվով ուսանողներ, որոնք գաղափարաքաղաքական աշխատանքներից բացի(1990-91 թթ. հրատարակվել է «Ավետյաց Երկիր» թերթը) մասնակցել են նաև պաշտպանական ու ազատագրական մի շարք մարտական գործողությունների:

Շարժման հենց առաջին օրվանից գաղափարական պայքարի հորձանուտի մեջ էին կին դասախոսներից Ա. Միհրանյանը, Լ. Գրիգորյանը, Ս. Ղազանչյանը և այլք: Նրանք ստորագրություններ էին հավաքում դասախոսներից, նամակներ և հեռագրեր էին հղում Մուսկվա՝ ի պաշտպանություն Արցախը մայր Հայաստանին վերամիավորելու: Մեր դասախոսները, ինչպես նշվեց, հանդես էին գալիս նաև պարբերական մամուլի էջերում:

Աղրբեջանական մամուլը հեղեղված էր Արցախի պատմությունը և Շարժման բուն էությունը խնդրայուրող ու ստահող հոդվածներով: Այսպես, 1988թ. փետրվարի 28-ի համարում «Բակինսկի ռաբուջի» թերթը տպագրել էր հայտարարություն այն մասին, որ պետական մրցանակի է ներկայացվել Դ. Ա. Ախունդովի «Աղրբեջանի հին և միջնադարյան ճարտարապետությունը» գիրքը: Դա մի «աշխատություն» էր, որտեղ հեղինակը ցիննիկորեն աղրբեջանական է համարում պատմական Հայաստանի Ուտիքը, Արցախը, Սյունիք նահանգների, Վայոց ծորի ճարտարապետական կորողները, ունմանակ գործություններ է կատարում Ամարաս, Գանձասար, Դադիվանք և միջնադարյան այլ վանքերի ու եկեղեցիների հանդեպ:

Պատմաբան Ս. Դադիվանը և գրականագետ Ս. Խանյանը գիտական հիմնավորումներով պատրաստեցին բողոք-նամակ և մի խումբ դասախոսների ստորագրությամբ հեղեցին ԽՄԿԿ կենկոմի գիտության բաժին, ԽԱՀՀ ճարտարապետների միություն, Հայկական ԽՍՀ-ում ռուսերեն հրատարակվող «Կոմունիստ» թերթի խմբագրություն և ՀԽՍՀ գրողների միություն: Այդ նամակ-բաղդրքը ինստիտուտի գիտնական մերի գաղափարական աշխատանքի խոսուն վկայություններից էր: Դ. Ա. Ախունդովի «աշխատությունը» ամենուրեք ենթարկվեց խիստ քննադատության և ընթերցող հասարակայնությունը հասու եղավ աղրբեջանցիների կողմից խլացվող ճշմարտության ու արդարությանը:

Հայկական գաղափարական ճակատամարտի վերածվեց 1988թ. ապրիլի 28-ի միջոցառումը: Խնասիդուտի կուսաքրությի քարտուղար Բ. Ֆարաջովի և բյուրոյի անդամ Ն. Կովկիսի պնդմամբ պետք է նշվեր Աղրբեջանում սովետական կարգերի հաստատման 68-րդ տարեդարձը: Դեռ մորմորում էին սումգայիթյան ցեղասպանության վերթերը, դեռ մարդիկ ուշքի չէին եկել անամոր հարևանների ոճրագործությունն ուրանալու ու վաստերը նենգափոխելու վարքից: Ցեղեկույթի ժամանակ գրականագետ Ս. Խանյանն իր գեկուցման մեջ, դասախոսներ Ս. Դադիվանը, Ծ. Արդահամյանն իրենց ելույթներում զայրույթով նշեցին, որ Սումգայիթյան ջարդերը պետք է որակվեն

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

որպես ցեղասպանություն, որ այն սև բիծ է աղորեջանական ժողովրդի պատմության մեջ: Սակայն, այդ ճշմարտած գնահատականը «վրուվմունքով» ընդունեցին աղորեջանցի դասախոսները և հեռացան դակիթացից: Ուրիշ ի՞նչ կարելի է սպասել իրենց մանկավարժ համարող այդ հանցագործմերից, որոնց խորհրդով 1988-ի փետրվարի 28-ին, այսինքն՝ սումգայիթյան նախարարի մոլեզին պահին աղորեջանցի ուսանողությունները ներկայացել էին դասի վարսերին կարմիր ժապավենների վմբեր և ջարդել ու պատահած անձնությունները:

Սեր ինստիտուտի հայ դասախոսների գաղափարական պայքարի կարևոր էջերից կարելի է համարել այն Դիմումը, որ ուղարկվեց ԽՍԿԿ Կենտկոմի քաղյուրոյին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, միութենական հանրապետությունների ԿԿ Կենտկոմներին, Կուսակցության ՌևՖՍՀ մարզային կոմիտեներին, ինքնավար հանրապետություններին և ինքնավար մարզերին: Դիմումը որպես բողոք գրվել է ԽՍԿԿ Կենտկոմի քարտուղար Լիգաչովի սաղոյի հայտարարության կապակցությամբ, որն արել է Աղորեջանի ԿԿ Կենտկոմի պլենումից հետո մարզկոմների և շրջկոմների հետ ունեցած հանդիպման ժամանակ: Նա հայտարարել էր, որ ԼՂԻՄ-ի հայերի պահանջը անլուծելի է, քանի որ այն կապված է «աղորեջանական գործոնի» հետ: Դրանով, փաստորեն, Լիգաչովը արդարացնում էր սումգայիթյան ցեղասպանությունը և խրախուսում աղորեջանցի մարդասպաններին: Դիմումի պատրաստմանը մասնակցել են Հ. Գրիգորյանը, Ս. Դադյանը, Ա. Մխիթարյանը, Կ. Արամյանը և Ս. Խանյանը: Դիմումը կարդացվել և ընդունվել է Ստեփանակերտ քաղաքի Հաղթանակ (այժմ՝ Ազատության) հրապարակում 1988-ի մայիսի 28-ին տեղի ունեցած 30 հազարամոց հանրահավաքում: Նման բրվանդակությամբ մի նամակ էլ մի քանի դասախոսների ստորագրությամբ ուղարկվել է ԽՍԿԿ գլխավոր քարտուղար Մ. Ս. Գարբաչովին:

Եերևան արցախյան ազգային ազատագրական պայքարի նախօրեին աղորեջանական մամուլը հաճախակի էր տպագրում Զ. Բունյաթովի ստահող հոդվածները Արցախի պատմության վերաբերյալ, որոնցում կեղծելով ճշմարիտ պատմությունը, նա ծգոտում էր ապացուցելու, որ Արցախն իր աղորեջանական հող է, որ հայերը տեղաբնիկ չեն, որ նրանք Դարաբաղ են եկել 1826-1828թթ ռուս-պարսկական պատերազմից հետո: Անհրաժեշտ էր պատասխանել նաև պանթուրքիզմի այդ ոչ անհայտ գաղափարախոսին: Այդ գործը հանձն առան Ս. Դադյանը և Ս. Խանյանը: 1989-ի մայիսի 23-ի համարում «Խորհրդային Պարաբաղ» թերթը տպագրեց «Ճշմարտությունը ամեն ինչից վեր է» վերտառությամբ ծավալուն հոդվածը: Այն արտասովել է նաև «Հովհաննես Կարաբախ» թերթում: Նրանում կարևոր փաստերի հիման վրա ներկայացվել է Արցախի հայաշունչ պատմության ընթացքը, Աղորեջանի քաղաքական ուժերի և վայ-գիտնականների ուսումնական ուժերի աղորեջանական աննահանջ պայքարի տարեգործության հանդեպ, որի պատճառով էլ Արցախը ուղիղ է ելել մայր Հայաստանին վերամիավորվելու պահանջով: Այնքան տեղին էր այդ հոդվածը, որ շատ չանցած, աղորեջանական մամուլը վայնասուն բարձրացրեց հեղինակների դեմ՝ նրանց անվանելով «Աղորեջանի պատմության գեղծարարներ և ռասիստներ»:

Բուրի կողեկտիվի գաղափարապաղաքական աննահանջ պայքարի տարեգործության փայլուն էջերից մեկը 1990թ. ապրիլի 24-ին 1915թ. Եղեռնի գոհերի հիշատակին կազմակերպված միջոցառություն էր: Պոյսանիչկո-սաֆոնովյան ռեժիմի հրահանգով քաղաքում արգելված էին հանրահավաքներն ու շքերթները: Սակայն Շարժման ակտիվ մասնակիցները գոնե Հայրենական պատերազմի գոհերին նվիրված հուշահա-

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

մալիր այցելելու և 1915-ի Եղեռնի գոհերի հիշատակը հարգելու թույլտվություն էին ստացել: < Գրիգորյանի մտահղացմամբ հուշահամայիրում, ռադիոկոմիտեի աշխատակիցների աջակցությամբ (նրանք տրամադրել էին բարձրախոսեր) տեղի ունեցավ հանրահավաք: Այն բացեց < Գրիգորյանը, ապա ելույթներ ունեցան դասախոսներ Ռ. Բալայանը, Ա. Թովմանյանը, Ա. Խանյանը: Նրանց էին միացել բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը և < Բեգլարյանը: Բանախոսները և դատապարտում էին 1915-ի ցեղասպանությունը, և կոչ անում ժողովրդին շարունակել պայքարը աղբբեջանական բրնատիրության դեմ:

<Ենց նոյն օրը նրանց կանչեցին քաղաքի պարետատուն, իսկ ապրիլի 26-ին հասուկ մեքենայով տարան Ստեփանակերտի պոնակայան, որը վերածվել էր ժամանակավոր մեկուսարանի: Ա. Խանյանը նոր էր դուրս գրվել հիվանդանոցից, ուստի < Գրիգորյանի և Ռ. Բալայանի պահանջով նրան ազատեցին՝ բավարարվելով 15-օրյա տնային կալանքով, իսկ մյուսներին որոշել էին ուղարկել Շուշիի բանտ: Ժողովրդի ճշշման տակ նախնական որոշումը տնային կալանքի փոխեցին նաև Ռ. Բալայանի, Գ. Գաբրիելյանի և < Բեգլարյանի:

Ահա այսպես, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կողեւտիկը գաղափարական ճակատի առաջնագծում, պայքարի տարբեր ծևերով ու միջոցներով, մարտնչել է հանուն Արցախի անկախության և ազատության:

Շարժման թշնամիները, անձնագրային խստակարգի(թեժիմի) ստուգման պատրվակով, ծերբակալում էին ակտիվիստներին, ահաբեկում կանանց ու երեխաներին: «Օղակ» ծածկանունով ռազմական գործողությամբ Գետաշենի Ենթաշրջանում, Հաղորդութիւն ու Շուշիի շրջաններում տասնյակ բնակավայրեր հայաթափեցին, խաղաղ բնակչությունը բռնատեղահանվեց Հայաստանի Հանրապետություն և այլուր: Արցախի աղբբեջանական բնակավայրերը վերածվեցին արդիական ռազմական տեխնիկայի, գենքի ու զինամթերքի, չվերահսկվող հարյուրավոր զինյալների հենակետների: Եվ այսպես Աղբբեջանը պատերազմ սանձագերծեց Արցախի դեմ: Հայրենիքի պաշտպանության նպատակով ավելի քան 400 ուսանողներ և բազմաթիվ դասախոսներ մարտադաշտ եւան ու իրենց հայրենասիրական ու քաղաքացիական պարտքը կատարեցին... Ուսանողներն աչքի ընկան Բերդածորի Ենթաշրջանի, Հաղորդութիւն ու Շահումյանի շրջանների ծայրամասային գյուղերի պաշտպանության ընթացքում: Ուսանողներ է. Բարսեղյանի, Լ. Կարապետյանի, Ի. Հասրաթյանի և այլոց անձնական օրինակն ու խիզախումները ոգեշնչման աղբյուր էին բնակմաթիվ ազատամարտիկների համար, ովքեր տոգորվում էին անառա թշնամուն ջախջախելու, Արցախի սահմաններից հետ շարուելու վճռականությամբ: Ուսանողներն առանձնահատուկ հակում ցուցաբերեցին դեպի ռազմական գործը, ինչի շնորհիվ նրանց հաջողվեց կարծ ժամանակամիջոցում ծեռք բերել ռազմական գերազանց գիտելիքներ, մարտական տեխնիկային տիրապետելու ունակություններ և, իհարկե, տարբեր ստորաբաժանումներ դեկավարելու փորձ ու հմտություն: Նրանցից շատերը հետմահու արժանացել են կառավարական պարգևների ու մարտական շքանշանների:

ԼՂԻՄ կառավարման հասուկ կոմիտեի ղեկավար Ա. Վոլսկին ստեղծված կացությունից ելքը համարեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի վերափոխելը: Այդ քայլը պետք է դիտարկել Արցախի արտադրական ծեռնարկությունները և մշակութային հիմնարկները Աղբբեջանական ԽՍՀ Ենթակայությունից հանելու և Հայկական ԽՍՀ Ենթակայությանը հանձնելու այն քաղաքական ուղղագիր համատեքստում, որը փորձում էր իրականացնել ԼՂԻՄ հասուկ կառավարման կոմիտեն:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2015

Աղետալի երկրաշարժի, շրջափակման, ադրբեջանցիների չղաղարող ահարեկչությունների և լարված քաղաքական իրադրության պայմաններում ԿՄԻ Ստեփանակերտի բաժնում գաղտնակում էր մասնագետների ամենամյա թողարկումը:

Եթենային Ղարաբաղի պետական համալսարանը հիմնադրվեց 1992 թ. հոկտեմբերին, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1993 թ. մայիսի 10-ին:

Արցախում համալսարանի ստեղծումն իրավամբ համարվում է ազատագրական պայքարի նվաճումներից մեկը և կարելի է գնահատել որպես << բարձրագույն կրթության համակարգի մեջ Արցախի համալսարանին ոյորուի ներառման կարևոր քայլ: Այն դարձավ արցախյան երիտասարդությանը համախմբող, գաղափարապես նախապատրաստող ու ազգօգուտ ջանքերը նպատակառություն կարևորագույն գիտակրթական հաստատություն, որի ներդրումը ազատագրական պայքարի նվաճումներում ու պետականակերտման գործընթացում ակնհայտ է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խանյան Ս., Արցախի պետական համալսարանը ազգային ազատագրական պայքարում: Տես «Արցախի համալսարան»(ԱրՊՀ պաշտոնաթերթ), Վետրվար-մարտ, 1998: Նույնը տես՝ Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), Ստեփանակերտ, 2007, էջ 3-6:
2. Գրիգորյան Լ., Ընդհատակում..., Տես «Արցախի համալսարան», Վետրվար-մարտ, 1998:
3. Բալյայան Ռ., Արցախի գոյապայքարում մեր ուսանողներն են..., «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 1, Ստեփ., 1998, էջ 73-76:
4. Բալյայան Ռ., ԱրՊՀ շրջանավարտների հայրենասիրական խիզախումները Արցախյան ազատանարտում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 5-6, Եր., 2005, էջ 126-131, նույնի՝ ԱրՊՀ մտավորականությունը և Արցախյան հերոսամարտը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», N 3-4, Եր., 2006, էջ 96-97:
5. Սարգսյան Ս., Ուսանողներն ու Արցախյան գոյամարտը: «Հայ զինվոր» (<<ՊՆ պաշտոնաթերթ), թիվ 31(336) 5-12 օգոստոս, 2000թ.:
6. Աբրահամյան Հ., Ճակատագրին ընդառաջ (Փաստավավերագրական ակնարկ), Եր., 2001:
7. Բալյայան Վ. Ռ., Բալյայան Ռ. Ա., Հարությունյան Մ. Ա., Հուշամատյան սխրանքի, Ստեփ., 2002:
8. Բալյայան Վ., Բալյայան Ռ., Հարությունյան Մ., Անկախության նվիրյալները: ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Եր., «Զանգակ-97», 2009, Բալյայան Ռ., Սարումյան Ն., Հարությունյան Մ., Արստամյան Ա., ԱրՊՀ մասնակցությունը արցախյան ազատագրական պայքարին, Ստեփ., 2012:
9. Տես «Ապառաժ», N 3-4(80-81), 1-28 փետրվարի, 2003 թ., «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003 թ. և այլն:
10. Ուսանողությունը և ղարաբառյան ազատագրական պատերազմը: Տես Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան մեկ հատորով, Հ. Ավագյանի խմբ., Եր., 2004, էջ 639-650:
11. Ավանեսյան Ա. Ս., ԼՂՊՀ (ԱրՊՀ). հայկական երկրորդ պետական համալսարան (1990-1994 թթ.), Ստեփ., 2008:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀԾՈՅՑ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՏՏՈՒ 2015

12. Հարությունյան Մ. Ա., ԱրՊՀ-ն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, ԱրՊՀ գիտական ընթերցումներ/ Զեկուցումների հիմնա-դրույթներ 20-21 ապրիլի 2009: Եր., «Զանգակ-97», 2009, 6-8, Հարությունյան Մ. Ա., Արցախի մայր բուիի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն»: ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 235-244:
13. Խանյան Ս., Արցախի պետական համալսարանը ազգային ազատագրական պայքարում: Տես «Արցախի համալսարան», փետրվար-մարտ, 1998:
14. Տես Կրթությունը, մշակույթը և սպորտը Արցախում(տպագրված է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի աշխատողների առաջին համագումարի աթիվ), Եր., 2006, էջ 74:
15. Հարությունյան Բ., Աթայան Կ., Արաջարան: Տես Կրթությունը Արցախում 405-2005 թթ., Եր., 2005, էջ 5:
16. Գրիգորյան Լ., Արցախի պետական համալսարանը՝ Արցախյան շարժման գաղափարաբարձրական կենտրոն, «Հայրենյաց պաշտպան» (ԱՊՎ միության պաշտոնաթերթ), մարտ 2003, էջ 3-4:
17. Խանյան Ս. Ա., Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), էջ 3:
18. Գրիգորյան Լ., Արցախի պետական համալսարանը՝ Արցախյան շարժման գաղափարաբարձրական կենտրոն, «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003, էջ 8:
19. Նոյն տեղում:
20. Նոյն տեղում, էջ 3:
21. Խանյան Ս. , Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը: «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), էջ 4:
22. Տես «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր. ա:
23. Խանյան Ս., Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), էջ 5:
24. Տես «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր. ա:
25. Նոյն տեղում:
26. Խանյան Ս., Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», N 2(15), էջ 5:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ազգային ազատագրական նորօրյա պայքարում Արցախի մայր բուիի դերի

մասին

Միեր Հարությունյան

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը գաղափարական ձակատի առաջնագծում, պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով, մարտնչել է հանուն Արցախի անկախության և ազատության:

Ուսանողության գործողությունները համակարգելու և ջանքերը համախմբելու նպատակով ինստիտուտում ստեղծվեցին ընդհատակյա կազմակերպություններ և միություններ, որոնք գաղափարաբոզական եռանդուն աշխատանք էին ծավալել:

Հայրենիքի պաշտպանության նպատակով ավելի քան 400 ուսանողներ և քաջարածիկ դասախոսներ մարտադաշտ ելան ու իրենց հայրենասիրական ու քաղաքացիական պարտը կատարեցին, նրանցից շուրջ յոթ տասնյակ նվիրյալներ՝ իրենց կյանքի գնով...

ՄԵՄՐՈՊ ՄԱՀԾՆԵ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԼՐԱՑՈՒ 2015

Բանալի բառեր՝ Արցախյան շարժում, բուհ, Ստեփիանակերտի մանկավարժական ինստիտուտ, զաղավհարական պայքար, ինքնապաշտպանության ուժեր, ռազմական գործ, պրոֆեսորադասախոսական կազմ:

РЕЗЮМЕ

Роль вуза Арцаха в национально-освободительной борьбе

Мгер Арутюнян

Коллектив Степанакертского пединститута на передовой линии идеологического фронта боролся за независимость и свободу Арцаха разными способами.

Для того чтобы объединить усилия и систематизировать действия студенчества, в институте были созданы подпольные сообщества и объединения, которые проводили активную идеологическую работу.

Для защиты родины более 400 студентов и многие преподаватели отправились на поле боя, чтобы отдать свой гражданский долг родине, 70 из которых – ценой собственной жизни.

Ключевые слова: Арцахское движение, вуз, Степанакертский пединститут, идеологическая борьба, оборонительные меры, военное дело, профессорско-преподавательский состав

SUMMARY

The Role of Arstakh University in the National Liberation Struggle

Mher Harutyunyan

The staff of Stepanakert Pedagogical Institute fighting for the independence and freedom of Artsakh at the ideological forefront used different types and means of struggle.

Underground communities and associations were formed in the Institute to join efforts and organize students' activities, to ensure active ideological work.

To defend their homeland more than 400 students and many teachers went on the battlefield to discharge civic duty, 70 of them at the cost of their lives.

Keywords: the Artsakhi movement, high school, Stepanakert pedagogical Institute, Ideological fight, self-defence forces, military science, staff.